Վ. ԴԱՐՅԱՆ

ԱՄԲԵՐՏ ԱՐԱԳԱԾԻ ՎՐԱ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳԱՎԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԴՊՐՈՑԸ

ԼՈՒՍՀՐԱՏ

10 NOV 2011

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳԱՎԱՌԱԳԻՏԱԿԱՆ ԿԱԲԻՆԵՏ

91
Դ-27
ա6

Վ. ԳԱՐՅԱՆ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳԱՎԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԴՊՐՈՑԸ

ԼՈՒՍԱՀՐԱՏ

ՅԵՐԵՎԱՆ 1939 Թ.

29 MAR 2013

20129

Պատ. խմբագիր՝ Մ. ԱՐՄԵՆՑԱՆ
Սրբագրիչ՝ Վ. ՊՈՂՈՍՅԱՆ

1317
40

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳԱՎԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Համկ(բ)կ 18-րդ համագումարի պատմական վորոշումները և մեր ժամանակաշրջանի մեծագույն մտածող ու առաջնորդ ընկեր ՍՏԱԼԻՆԻ զեկուցումը, հզոր լուսարձակի պայծառ շողերի նման տարածվեցին մեր լայնածավալ յերկրի բոլոր անկյունները, նոր լիցք տվեցին խորհրդային ժողովրդին, ուղենիշ ասող հանդիսացան սոցիալիզմից աստիճանաբար կոմունիզմին անցնելու պատմական մեծ դարաշրջանը կերտելու՝ կոմունիզմ կառուցելու գործում։

Ե՛լ ավելի սկսեցին բոցավառվել մեր մեծ առաջնորդի ցուցումները խորհրդային հայրենասերների սրտում։

Խորհրդային ժողովուրդը ԼԵՆԻՆԻ-ՍՏԱԼԻՆԻ մեծ և պանծալի կուսակցության, ընկեր ՍՏԱԼԻՆԻ ցուցմունքներով և ղեկավարությամբ ստեղծեց կուլտուրական, ուրախ ու յերջանիկ կյանք։

Հազարավոր աշխատավորներ ճանապարհորդություններ են կատարում, եքսկուրսիաներ ու

եքսպեդիցիաներ են կազմակերպում դեպի մեր լայնածավալ յերկրի հեռավոր անկյունները, դեպի յերկնամբարձ լեռներն ու կապուտակ ջրերը՝ մեր սքանչելի հայրենիքն ուսումնասիրելու և ճանաչելու համար։

Պատմության մեջ չտեսնված ծավալով զարգանում է խորհրդային ժողովրդի հետաքրքրությունն ու սերը դեպի իր հայրենիքը։

Բոլորը ձգտում են ճանաչելու և ուսումնասիրելու մեր յերկրի անցյալ պատմությունը, Մեծ Հոկտեմբերի համար մղված պայքարի պատմությունը, սոցիալիստական շինարարությունը, մեր յերկրի անհուն և անսպառ հարստությունները, նոր կյանքը։

Խորհրդային գավառագիտությունը, վորպես մեր հզոր հայրենիքն ուսումնասիրելու, ճանաչելու գործ, վորպես խորհրդային հայրենագիտություն, ընկեր ՍՏԱԼԻՆԻ գեկուցումից հետո նոր թափ է ստանում և ավելի ու ավելի յե սկսում ծավալվել։

Անցյալում գոյություն ունեցող գավառագիտական ընկերություններում և գավառագիտական բյուրոներում ծվարած՝ ժողովրդի թշնամիներն այդ կարևոր բնագավառը նույնպես վտանգել եյին իրենց վնասարար գործունեությամբ։

Գավառագիտական կազմակերպությունները վերածվել եյին անգործունյա և ապաքաղաքականացած մի կազմակերպության, վորոնք իրենց աշխատանքները տանում եյին մեկուսի, առանց վորևե կապ ունենալու կուսակցական և խորհրդային կազմակերպությունների հետ, կտրված ժողովրդական լայն մասսաներից՝ ահա ժողովրդի թշնամիների սեվ գործի ամենակեղտոտ մեթոդները։

Ահա թե ինչու միանգամայն ժամանակին եր ու տեղին, յերբ մեր վերադաս որգանները 1937 թվին վորոշում ընդունեցին վերացնելու գավառագիտական բյուրոները և ընկերությունները։

Այդ կազմակերպության վերացումից հետո, փոխանակ գործը տեղից շարժելու և ինքնարարության հետքերն անհապաղ վերացնելու ու նոր թափ հաղորդելու այդ չափազանց կարևոր բնագավառի աշխատանքներին, ընդհակառակը՝ գավառագիտության աշխատանքները հանցավոր կերպով, դրեթե բոլորովին մոռացության տրվեցին։ Վորոշ շրջաններում ու դպրոցներում գոյություն ունեցող գավառագիտական նյութերը ցաք ու ցրիվ տրվեցին, քայքայվեցին գավառագիտական փոքրիկ թանգարանները։

Նույնիսկ գտնվեցին մարդիկ, վորոնք գավա-

ռագիտական ընկերությունների վերացումը բացատրեցին որպես գավառագիտական աշխատանքների վերացում։

Այդ, անշուշտ, թշնամական վերաբերմունքի արտահայտություն եր դեպի խորհրդային գավառագիտությունը և գավառագիտական ակտիվը։

Մեր յերկրում ունենք հազարավոր գավառագետներ. այդ ապացույց է այն բանի, որ մեր մեծ ու հզոր հայրենիքն ուսումնասիրելու, այն ճանաչելու ցանկությունը շատ մեծ է խորհրդային ժողովրդի մեջ։

Բանվորները, կոլտնտեսականները, ինտելիգենցիան, ծառայողներն ու մասնագետները, մեր դպրոցականներն ու յերիտասարդությունը ծարավի յե մոտիկից ճանաչելու և ուսումնասիրելու մեր ծաղկող ու յերջանիկ կյանքով ապրող աշխատավորների մեծ հայրենիքը։ Նրանց հետաքրքրում է այն ամենը, ինչ ոգտակար է և ինչ նպաստում է սոցիալիստական հայրենիքի ամրապնդմանը, բարգավաճմանը, պաշտպանությանը։

Այժմ մեր յերկրում ունենք բազմաթիվ պատանի և յերիտասարդ գավառագետ կոմյերիտականներ ու պիոներներ, որոնք հսկայական աշխատանք են կատարում։ «Ուզում եմ ոգտակար լինել մեր սիրելի հայրենիքին, ուզում եմ ոգնել սոցիալիստական շինարարությանը».- ահա

թե ինչն է վոգեշնչում և առաջ մղում պատանի ու յերիտասարդ գավառագետին։

Գավառագիտությունը, վոր բառացի նշանակում է «գավառը գիտենալ», այսինքն ճանաչել տվյալ վայրը, դեռևս չի արտահայտում այդ հասկացողության վողջ եյությունը, նշանակությունը։ Դեռևս մեր գավառագետներից վոմանք այն թյուր կարծիքն ունեն, թե գավառագիտական ուսումնասիրությունների ոբյեկտը պետք է հանդիսանա միմիայն շրջանը, առանձին վայրը, գյուղը, քաղաքը։

Այդ «գավառ» բառի հին հասկացողությունը լինելը թյուրիմացության մեջ է գցում շատերին։

Միանգամայն իրավամբ պետք է նշել, վոր իրոք «գավառագիտություն» բառը լրիվ չի արտահայտում մեր յերկիրն ուսումնասիրելու գործի վողջ եյությունը, խորհրդային հայրենագիտության վողջ բովանդակությունը։ Չե՞ վոր „краеведение“ հասկացողությունն ավելի լայն է ու բովանդակալից, քան թե «գավառագիտություն»-ը։ Այդ տեսակետից ավելի ճիշտ կլիներ, յեթե ասեյինք՝ «յերկրագիտություն».—այսինքն մեր յերկիրը «գիտենալու», ճանաչելու գործ։

«Յերկրագիտություն» բառն ավելի կհամապատասխաներ „краеведение“ հասկացողու-

թյանը, քան թե մինչև հիմա ընդունված «գավառագիտություն» բառը։

Շատերը կարծում են, որ գավառագիտության բովանդակությունը միայն «գավառ»-ն ուսումնասիրելն է՝ և քանի որ այժմ «գավառ» հասկացողությունը, որպես վարչական միավորի հասկացողություն, վաղուց է վերացված, ապա ուրեմն գավառագիտությունն էլ պետք է վերանա։ Հակառակ դեպքում, այն պետք է փոխարինել մի ուրիշ հասկացողությամբ, թերևս՝ «շրջանագիտությամբ», որպեսզի ուսումնասիրվի միմիայն շրջանը՝ իր բոլոր առանձնահատկություններով, անցյալով, կուլտուրայով և կենցաղով։ «Շրջանագիտություն»—այս ավելի ճիշտ կլինի,—ասում են վոմանք,—քանի որ նախկին գավառներն այլևս չկան և նրանց փոխարեն այժմ, որպես վարչական միավոր, շրջաններն են, ապա ուրեմն գավառագիտությունն էլ պետք է փոխարինել «շրջանագիտությամբ»։

Այս տեսակետից ավելի լավ կլիներ, յեթե մենք դեն գցեյինք այդ հնացած «գավառագիտություն» բառը և նրա փոխարեն գործածեյինք «խորհրդային յերկրագիտություն» կամ «խորհրդային հայրենագիտություն» բառերը։ Բայց քանի որ «գավառագիտություն» բառը ներկա դեպքում պայմանական նշանակություն ունի և հասարակայնություն է ստացել, առայժմ մենք այդպես էլ կշարունակենք անվանել՝ «գավառագիտություն»—ռուսերեն „краеведение" բառի փոխարեն։

«Վերաստեղծել իրականությունը կարելի յե միմիայն այն ժամանակ, յերբ մենք այն ճանաչում ենք»։—ասում է ընկեր ՍՏԱԼԻՆԸ։

Այդ տեսակետից փոխվում է նաև գավառագիտության բովանդակությունը։

«Գավառագիտությունը չի կարող ընդգրկել վողջ հանրապետությունը, այն, ժամանակ այդ գավառագիտություն չի լինի»,—ասում են նախկին՝ գավառագետները։

Անշուշտ սխալ է հարցի այդպիսի մեկնաբանումը։ Ուրեմն ինչ է գավառագիտությունը։

Խորհրդային գավառագիտությունը — այդ խորհրդային հայրենագիտությունն է, մեր հայրենիքը ճանաչելու, ուսումնասիրելու միլիոնավոր աշխատավորների բուռն տենչանքը։ Իսկ մեր հայրենիքը չէ վոր միայն շրջաններով չի սահմանափակվում։ Այստեղից միանգամայն պարզ է, վոր գավառագիտական ուսումնասիրությունները չեն սահմանափակվում շրջաններով, մի հանրապետությամբ, այլ ընդգրկում են վողջ Խորհրդային Միությունը, բոլոր ժողովուրդների մեծ Հայրենիքը։

Մեր կոլտնտեսականի, բանվորի, ինտելիգենտի, դպրոցականի բուռն ցանկությունն է՝ վոչ միայն ուսումնասիրել իր կոլտնտեսությունը, իր շրջանը, իր վայրը, այլև մեր յերկրի կենտրոնական մասերից մինչև հեռավոր ծայրամասերն ընկած հետաքրքիր ոբյեկտները, գործարանները, հանքերը, կոլտնտեսությունները, պատմական նշանակություն ունեցող հետաքրքիր վայրերը և այլն։

Մեր յերկրի, շրջանի, բնակավայրի ճանաչողությունը պատմության, բանվորների և գյուղացիների՝ իրենց շահագործողների դեմ մղած պայքարի հերոսական մարտերի և անցքերի ուսումնասիրությունը, բուսական և կենդանական աշխարհի ուսումնասիրությունը, ոգտակար հանածոների հայտնաբերումը, տեղական ֆոլկլորի, ազգագրության, հնությունների ուսումնասիրությունները ու հավաքը,—ահա այս բոլորն ոգնում են գավառագետին՝ մեր յերկրի անցյալը և սքանչելի ներկան ճանաչելու։

1932 թվին, ԽՍՀՄ ընդերքի միութենական հետախուզություններ կազմակերպելու առնչությամբ, «Կոմսոմոլսկայա պրավդա»-ի խմբագրությանն ուղղած իր նամակում ընկ. Վ. Վ. ԿՈՒՅԲԻՇԵՎԸ գրել է.—

«Մենք դեռյեվս քիչ ենք ճանաչում մեր յերկիրը։ Մենք պետք է ճանաչենք մեր յերկիրը։ Այս խնդիրը չի կարելի իրագործել միայն մասնագետ յերկրաբանների ուժերով, հետախուզական պարտիաների միջոցով, վորոնք ուղարկվում են մեր գիտական յեվ տնտեսական մարմինների կողմից։

Մեր բնական հարստությունների ուսումնասիրությունը չի կարելի պատկերացնել՝ առանց բանվոր դասակարգի շարքերից կամավոր աշխատողների լայն մասսաներ գործի մեջ ընդգրկելու»։

Ընկեր ԿՈՒՅԲԻՇԵՎԻ այս խոսքերը պետք է միշտ հիշել, յերբ խոսքը վերաբերում է մեր յերկիրը ճանաչելուն։

Այստեղից պարզ է, վոր խորհրդային գավառագիտությունը վոչ թե ապաքաղաքական գործ է, այլ մասսայական, քաղաքական, կուլտուրական մեծ գործ է, սոցիալիստական արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացմանը նպաստող, ԽՍՀՄ աշխատավորության ծաղկող կուլտուրայի զարգացմանը նպաստող գործ, մեր մեծ յերկիրն ու առանձին շրջանները բազմակողմանի և գիտա-

կանորեն ուսումնասիրող արժեքավոր գործ, ինտերնացիոնալ դաստիարակության գործ։

Անցյալում գավառագիտությամբ զբաղվող մարդիկ պարփակվել էին հեռավոր անցյալի հուշարձաններն ուսումնասիրելու և պեղումներ կատարելու նեղ շրջանակի մեջ։ Հաճախ նրանք ավելի շատ նպաստում էին կրոնական կուլտուրայի տարածմանը՝ անցյալի կրոնական հուշարձանները չ'ձեվավորելով համապատասխան հակակրոնական բովանդակությամբ։ Սակայն չպետք է մոռանալ, որ խորհրդային գավառագետները պետք է ուսումնասիրեն ոչ միայն մեր անցյալ պատմության հոյակապ կողմերը, այլ նաև մեր փառապանծ ներկան, պետք է վեր հանեն մեր հայրենիքի սոցիալիզմի շինարարության լուսապայծառ առորյան ու անսահման հարստությունները։

Խորհրդային գավառագիտությունը, որպես մասսայական հասարակական շարժում, պետք է ընդգրկի իր մեջ այն ժողովրդական մասսաները, գավառագիտական աշխատանքը պետք է սերտ կերպով կապված լինի հեղափոխական կոնկրետ հուշարձանների կուլտուր-կրթական աշխատանքների հետ, որոնք կապված են կուսակցության և կառավարության ղեկավարների անունների և

հոյակապ գործունեության հետ, ինչպես նաև պատմության, արվեստի, ճարտարապետության, հնագիտության և այլ հուշարձանների հետ։

Գավառագիտական վողջ աշխատանքը պետք է ներծծված լինի հակակրոնական բովանդակությամբ։ Այս ամենից շատ վերաբերում է անցյալի պատմական հուշարձաններին, որոնց մեջ Հայաստանում գերակշռող են հանդիսանում հին վանքերն ու յեկեղեցիները։ Այսպես ուրեմն՝ խորհրդային գավառագետը պետք է ուսումնասիրի մեր յերկրի անցյալ և ներկա պատմությունը ոչ միայն դասագրքերով, այլ նաև պատմա-կուլտուրական այն կողմերով, որոնցով շատ հարուստ է մեր յերկիրը։

Ուսումնասիրել և պահպանել հին և նոր կուլտուրայի հուշարձանները, քաղաքացիական կռիվների, կուսակցության և կառավարության ղեկավարների անունների հետ կապված հուշարձանները—ահա խորհրդային գավառագետի առաջնահերթ խնդիրներից մեկը։

«Զարգացնել ու արմատավորել խորհրդային հայրենասիրությունը»,— ասաց կուսակցության 18-րդ համագումարում ընկեր ՍՏԱԼԻՆԸ։

Խորհրդային հայրենասիրության խոշոր լծակներից մեկն ել հանդիսանում է խորհրդային գավառագիտությունը։

«Ճանաչենք մեր յերկիրը»,—այս պետք է լինի յուրաքանչյուր գավառագետի հիմնական խնդիրը։

Յերրորդ հնգամյա պլանը հսկայական խնդիրներ է դնում սոցիալիստական շինարարության բոլոր բնագավառներում։

Խորհրդային գավառագետը պետք է ոժանդակի տնտեսական բոլոր կազմակերպություններին՝ յերրորդ հնգամյա պլանում առաջադրված խնդիրները կատարելու գործում։ Հայտնաբերել յերկրի ընդերքի հարստությունները և խպաս դնել սոցիալիստական շինարարությանը, ոժանդակել աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու ձեռնարկումներին, կոլտնտեսական բերքի բարձրացմանը և մի շարք այլ տնտեսական ձեռնարկումներին։ Այս էլ՝ խորհրդային գավառագետի գործն է։

Գավառագետի ամբողջ աշխատանքի արդյունքը պետք է ամփոփված լինի գավառագիտական թանգարանում, որի նշանակությունն անչափ մեծ է գավառագիտական աշխատանքները և ուսումնասիրություններն ավելի լայն կերպով ծավալելու տեսակետից։

Շրջանային գավառագիտական թանգարանները, դպրոցական գավառագիտական կաբինետները և վերջապես ակումբներում, խրճիթ-ընթերցարաններում և այլ կազմակերպություններում գործող գավառագիտական անկյունները պետք է հանդիսանան վողջ գավառագիտական աշխատանքների կենտրոնը և կազմակերպիչը։

Գավառագիտությունը, որպես խորհրդային հայրենիքն ուսումնասիրելու, այն ճանաչելու մեծ գործ, որպես խորհրդային հայրենագիտություն, պետք է պատշաճ բարձրության վրա դնել և գինվելով Համկ(բ)Կ 18-րդ համագումարի պատմական որոշումներով, առանձնապես՝ յերրորդ հնգամյա պլանի վերաբերյալ գավառագետների ուշադրությունը պետք է բևեռել տեղական հումքային աղբյուրների հայտնաբերման, տեղական սպառման առարկաների արտադրության զարգացման, յերկիրն ուսումնասիրելու բազմաթիվ ու բազմազան հարցերի վրա։ Իսկ այդ աշխատանքները կարելի յե հաջող կազմակերպել միմիայն այն դեպքում, յերբ շրջանում կամ յուրաքանչյուր դպրոցում հիմնադրվի գավառագիտական թանգարան, յերբ յուրաքանչյուր թանգարանի շուրջը կհամախմբվի տեղական գավառագիտական ակտիվը, կստեղծի խորհուրդ, որը և կ'ղեկավարի վողջ գավառագիտական աշխատանքը շրջանում, յուրաքանչյուր դպրոցում և գյուղում։

ԳԱՎԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԴՊՐՈՑԸ

Խորհրդային դավառագիտության բոլոր բնագավառներին վերաբերող ուսումնասիրությունները դպրոցում ամբողջապես յենթարկվում են ուսուցման պրոցեսի, դպրոցի ուսումնա-դաստիարակչական նպատակներին և ծառայեցվում են դպրոցականներին՝ ավելի լավ յուրացնելու դասավանդվող մի շարք առարկաներ, ինչպես որինակ. աշխարհագրություն, պատմություն, բնագիտություն և այլ ուսումնական առարկաներ, սերտ կերպով կապելով նրանց ուսումնասիրությունը շրջապատող կյանքի հետ։

Գավառագիտությունը դպրոցում ունի խոշոր դաստիարակչական նշանակություն։

Նա ծառայեցվում է ավելի կենդանի և աշխույժ դարձնելու ուսուցումը, ծառայեցվում է մեթոդների բարելավմանը, ինչպես որինակ. գավառագիտական ուսումնասիրությունների միջոցով հնարավոր է դառնում մի շարք առարկաների դասավանդումն ավելի հետաքրքիր դարձնել՝ կիրառելով դիտողականություն, կոնկրետ

ուսուցում, եքսկուրսիաներ և տուրիստական արշավներ, լաբորատոր աշխատանքներ և այլն։

Դպրոցի գավառագիտական աշխատանքները պետք է անցկացնել՝ սերտորեն կապելով այն ուսումնական ծրագրային նյութերի դասավանդման հետ։

Գավառագիտության տարրերի կիրառման մասին ուսուցման պրոցեսում՝ իր ժամանակին միանգամայն իրավացիորեն նշված է նաև Համ. Կ(բ)Կ Կենտկոմի վորոշումների մեջ։ Այդ կապակցությամբ առանձնապես պետք է հիշատակել Համ. Կ(բ)Կ Կենտկոմի 1932 թ. ոգոստոսի 25-ին ընդունած՝ «Տարրական և միջնակարգ դպրոցի ծրագրերի և ռեժիմի մասին» հայտնի վորոշումը, վորտեղ նշված է այն անհրաժեշտությունը, վոր՝ հանրակրթական դպրոցի հասարակագիտության, գրականության, լեզվի, աշխարհագրության և պատմության գծով պետք է դասավանդել՝ «կարեվորագույն գիտելիքներ ԽՍՀՄ ժողովուրդների ազգային կուլտուրաների վերաբերյալ, նրանց գրականության, արվեստի, պատմության զարգացման, նույնպես յեվ ԽՍՀՄ գավառագիտության տարրերը (բնության առանձնահատկությունները, արդյունաբերության, գյուղատնտեսության, սոցիալ-տնտեսական զարգացումը յեվ այլն»)։

1317
40

Համամիութենական Կոմունիստական (բ) Կուսակցության վորոշման մեջ արդեն միանգամայն պարզ բնորոշվում է, վոր գավառագիտության տարրերը դպրոցում ամենասերտ կերպով կապված են բնագիտության, աշխարհագրության (արդյունաբերության), գյուղատնտեսության, պատմության, սոցիալ-անտեսական զարգացման և այլ բնագավառների ուսումնասիրության հետ։

Պարզ է, վոր գավառագիտության տարրերը դպրոցում կիրառողը հանդիսանում է առաջին հերթին ինքն՝ ուսուցիչը։ Հենց այս տեսակետից էլ անհրաժեշտ է, վոր ուսուցիչը ծանոթ լինի մեր յերկրին, բնակավայրին, այլ կերպ ասած՝ նա պետք է գավառագետ լինի։

Ուսուցիչը պետք է լավ ծանոթ լինի տեղական վայրի և հանրապետության առանձնահատկություններին, վերջ խորհրդային մեր հայրենիքին։

Նա պետք է ճանաչի իր բնակավայրը, մեր յերկիրը, վորպես տեղագրական մի միավոր՝ իր բնական, տնտեսական, կուլտուր-կենցաղային և վարչական-քաղաքական պայմաններով, թե ներկայում և թե անցյալում, պետք է կարողանա տեսնել բնակավայրի ապագա հեռանկարները՝ սերտ կերպով կապված Ստալինյան հնգամյակների մեծ ծրագրի հետ։

Յուրաքանչյուր գավառագետ (краевед) ուսուցիչ—աշխարհագրագետ, պատմաբան, բնագետ պետք է լրիվ չափով տիրապետի ուսումնասիրության գիտա-հետազոտական մեթոդին։ Նա պետք է բազմակողմանիորեն ճանաչի իր յերկիրը, իր շրջապատը, նա պետք է կարողանա կազմակերպել հետախուզական աշխատանքը դպրոցում և գյուղում։

Անդարձ անցել են այն ժամանակները, յերբ գյուղական ուսուցիչը լոկ կյանքի հանդիսատեսն եր։ Նոր, կոլտնտեսային գյուղի ուսուցիչն իրական, ակտիվ մասնակցություն ունի նոր գյուղի քաղաքական, կուլտուր-կրթական կյանքի վողջ պրոցեսին. նա վոչ միայն ոգտվում է այդ կյանքից, այլև տալիս է նրան իր ուժերի մաքսիմումը, չխնայելով անգամ իր կյանքն իր հայրենիքի բարորության համար։

Դպրոցական պարապմունքների գավառագիտական բովանդակությունը զերազանցորեն մոտեցնում է դպրոցը կյանքին, տեղական կյանքի պայմաններն ուսումնասիրելու քաղաքացիական հետաքրքրություն է առաջ բերում, դասատիրակում է գործնականապես դիտելու կարողություն, ուշադիր վերաբերմունք դեպի շրջապատը, դատողության կենսական պարզություն,

բնակավայրի կարիքները ճանաչելու և հասկանալու ունակություն։

Դպրոցական դավառագիտության նպատակն է՝ աշակերտներին ճանաչել տալ մեր հզոր հայրենիքը, սոցիալիզմից աստիճանաբար դեպի կոմունիզմ տանող վողջ ուղին, դաստիարակել նրանց մեջ հայրենասիրական վառ զգացումներ և ամուր վճռականություն՝ բնակավայրի և ամբողջ յերկրի բարգավաճման համար աշխատելու։

* * *

Մեր բոլոր տիպի դպրոցների նոր ծրագրերը ձգտում են ուսման և դաստիարակության ավելի ռացիոնալ սկզբունքներ ստեղծել. այդ տեսակետից անհրաժեշտ է, վոր տեղական դավառագիտական նյութը դառնա դպրոցի ուսումնական-ծրագրային նյութի յուրացման համար, վորպես մեթոդական ոժանդակության անհրաժեշտ ելեմենտը, ոգտագործելով դավառագիտական ուսումնասիրությունները և դիտողությունները, վորպես ուսուցման դիդակտիկ նյութ։ Մեր դպրոցներում ուսման և դաստիարակության համար, վորպես այդպիսի նյութ ծառայում են դպրոցը շրջապատող բնության կյանքը, մարդու կյանքն ու աշխատանքը և հասարակությունն իր անցյալով ու ներկայով։

Այսպես որինակ՝ աշխարհագրության ծրագրի դասավանդման ընթացքում ուսուցիչը յուրաքանչյուր թեմա պետք է կապի կոնկրետ միջավայրի հետ, ոգտագործելով այդ միջավայրը վորպես դավառագիտական ուսումնասիրությունների օբյեկտ։ Այսպես՝ «Յերկրագնդի կազմության ընդհանուր պատկերը» հատվածը դասավանդելիս յերկրի կեղեվը կազմող գլխավոր լեռնատեսակներն իմանալն անհրաժեշտ է։

«Իսկ այդ լեռնատեսակները կարելի յե իմանալ միայն այն դեպքում, յերբ այդ լեռնատեսակը ձեռքդ ես վերցրել կամ աչքիդ առաջին է։ Լեռնատեսակների նման առարկայական ծանոթությունը խիստ ոգտակար է։ Յերեխաները փոքր հասակից հետաքրքրություն են հանդես բերում դեպի լեռնատեսակները, սկսում են հավաքել, կոլեկցիաներ կազմել և այլն։ Առանց բնական լեռնատեսակը ցույց տալու յերեխաների համար յերբեք հասկանալի չեն լինում բոլոր այդ գրանիտները, գնեյսները յեվ բյուրեղային լեռնատեսակները, ու դրանք մնում են յերեխաների համար դատարկ ու անմիտ բառեր։ Մինչդեռ յերեխաներն աշխարհագրության դասերին մինչև բարձրագույն դպրոցը ներառյալ, միշտ պետք է լսեն և հանդիպեն այդ լեռնատեսակների անուններին»*)։

*) Մեթոդական ոգնություն ուսուցիչներին. Աշխարհագրություն, եջ 17.

Մեր յերկիրը լեռնային յերկիր է, և այդ տեսակետից բնական լեռնատեսակների դիտողականության համար, հավաքման և կոլեկցիաներ կազմելու համար կան ամենալայն հնարավորությունները։

Վերցնենք որինակի համար մի քանի լեռնատեսակներ, որոնցով չափազանց հարուստ է Հայաստանը։ Մեր չքնող Լոռին ունի գրանիտի անսպառ պաշար։ Շահալիի, Ճոճկանի, Այրումի, Սիսի-Մաղանի հրաշալի լեռնային տեսակները, Կոնգուր-Ալագյոզի հոյակապ լեռնաշղթան, Ոլչիչայը Զանգեզուրում, այս գրանիտով հարուստ մեր լեռները խոշոր նյութ կարող են հանդիսանալ այդ շրջանների և վոչ միայն այդ շրջանների դպրոցների աշխարհագրության կոնկրետ մեր նշած թեման մշակելիս։ Սա կլինի Գավառագիտական աշխարհագրական լավագույն ուսումնասիրությունը, վորն ուսուցման պրոցեսում կապահովի տվյալ թեմայի դիտողական, հետաքրքիր և գրավիչ դասավանդումը։

Յեվ վերջապես՝ վերցնենք մյուս լեռնատեսակները՝ Գնեյսները, վորի հսկայական պաշարներ կան հարավային Զանգեզուրում, Նյուվադի շրջանում։ Այնուհետև, բյուրեղային տեսակները, վորը կարելի յե հանդիպել Հայաստանի

բոլոր շրջաններում։ Այդ բյուրեղային տեսակներից՝ անդեզիտ, պորֆիրիտ, բազալտ, տրախիտ յեվ այլն, հսկայական պաշարներ կան Սեվանի շրջակայքում, ամբողջ Շամշադինի շրջանը հարուստ է այդ լեռնային տեսակներով, Իջևանի, Զանգեզուրի, Ալահվերդու շրջանները և այլն։

Վերցնենք մի ուրիշ որինակ. «Հրաբուխներ և ոգտակար հանածոներ» թեման։

Բազմաթիվ ոգտակար հանածոներ լինում են հենց հրաբխի մեջ և հրաբխային ժայթքումների արդյունք են։ Հրաբխային փրփուրից առաջանում է հրաբխային տուֆը, վորը ծառայում է վորպես լավ շինանյութ։ Նուշնպիսի լավ շինանյութ է հանդիսանում նայել ծակոտկեն (սպունգանման) լավան։ Փրփրակալած լավայի մասսան՝ պեմզան ոգտագործում են հղկելու համար։ Հրաբուխները արտադրում են մեծ քանակությամբ նաև ծծումբ։

«Թե ինչ ծավալով ուսուցիչը պետք է դաղափար տա հանքաառաջացման մեջ հրաբխականության նշանակության մասին, դրան մի պատասխան տալ չի կարելի։ Յեթե դպրոցը գտնվում է այս կամ այն շինանյութի կամ հանքի արդյունահանման վայրի մոտ, ապա տվյալ ոգտակար հանածոյի առաջացման հարցերը պետք

ե, ըստ հնարավորության պարզաբանեն մանրամասնորեն»*):

Այստեղից ևս միանգամայն պարզ է, որ մեզ մոտ այդ հրաբխային լավաներից գոյացած ոգտակար հանածոների՝ տուֆի, պեմզայի հսկայական արդյունահանվող պաշարներ ունենք Անիում, Արթիկում:

Յեվ վերջապես՝ Հայկական ԽՍՀ աշխարհագրությունը դասավանդելիս ուսուցիչն աշակերտի ուշադրությունը հրավիրում է հետևյալ խնդիրների վրա:

1. Հայկական ԽՍՀ ռելյեֆը, լանդշաֆտային զոնաները, մեր յերկրի առանձնահատկությունները՝ որպես բարձր լեռնային յերկիր:

2. Թվում է պղնձի և մի շարք այլ շինանյութերի հանքավայրերը: Հայաստանի շինանյութերի հրաբխային ծագում ունենալու առանձնահատկությունները:

3. Արդյունաբերություն—պղինձ, շինանյութերի արդյունահանություն, մրգակոնսերվային, գինեգործական, շաքարի, կաշվի, ձեթի և նոր զարգացող մեծ չափերով եներգիա պահանջող քիմիական ճյուղերը (ՍԿ):

4. Սևանի ջրերի ոգտագործումը, որպես հսկայական տնտեսական և քաղաքական նշանակություն ունեցող պրոբլեմ:

*) Մեթոդական ոգնություն ուսուցիչներին. եջ 34

Դպրոցում խնամքով յեվ ամենայն բարեխղճությամբ կատարված գավառագիտական դիտողությունները, ուսումնասիրությունները վոչ միայն անփոխարինելի դիդակտիկ նյութ կտան աշակերտությանը, այլ և այդ ուսումնասիրությունները խոշոր չափով կ'նպաստեն հայտնաբերելու նորանոր լեռնային տեսակներ, նրանց պաշարների չափը և այլն: Այդ բոլոր հանածոների, լեռնային տեսակների կոլեկցիան հետագայում ի մի հավաքելով, աշակերտները և ուսուցիչները դպրոցում պետք է կազմակերպեն աշխարհագրական-գավառագիտական առանձին կաբինետ, կամ յեթե այդ հնարավոր չէ, ապա փոքր դպրոցներում, մանավանդ՝ գյուղական և շրջանային դպրոցներում կազմակերպված գավառագիտական կաբինետներում ունենալ առանձին աշխարհագրական բաժին, որտեղ և կենտրոնացնել ամբողջ շրջանի, կամ հանրապետության ոգտակար հանածոները—լեռնային տեսակները:

Խոշոր նշանակություն ունի բուսաբանությունը դպրոցական ուսումնական սիստեմում, որպես գավառագիտական ուսումնասիրությունների առարկա:

Մեր դպրոցներում հսկայական աշխատանք է կատարվում տեղական բույսերի ուսումնասիրման ընդգավառում։

Միջնակարգ դպրոցների ծրագրերում խոշոր տեղ է տրվում բուսաբանության առարկայի լաբորատոր, եքսկուրսիոն և հետախուզական աշխատանքներին։ Ուսումնասիրությունների այդ մեթոդը պետք է լրիվ ընդգրկել դպրոցական ուսուցման պրոցեսն ավելի ռացիոնալ և արդյունավետ դարձնելու նպատակով։

Պետք է առաջին տեղը տալ դպրոցական ֆենոլոգիկ դիտողություններին կուլտուրական բույսերի վրա։ Նկատի ունենալով այն խոշոր ծառայությունը, որ մատուցում է բուսաբանական ուսումնասիրությունը մեր սոցիալիստական շինարարությանը, այդ տեսակետից տեղական դպրոցի կողմից կատարվող շրջանի բույսերի ֆենոլոգիկ դիտողությունները հսկայական նշանակություն են ստանում։

Այս տեսակետից պարզ է, որ դպրոցը սերտ կապ պետք է պահպանի տեղական, գյուղատնտեսական կազմակերպությունների հետ, հաճախ կազմակերպի եքսկուրսիաներ դեպի տեղական-գավառագիտական թանգարանները կամ որևէ դպրոցում լավ կազմակերպված գավառագիտական կաբինետի գյուղատնտեսական բաժինը, ապա դեպի շրջանի գյուղատնտեսական փորձնական կայանը, խորհտնտեսությունը, կոլտնտեսությունը՝ ծանոթանալու համար սերմերի զտման և տեսակավորման հետ, հողերի հետ, որպես բույսերի զարգացման միջավայր, բույսերի վեգետացիայի հետ և այլն։

Լաբորատոր և եքսկուրսիոն աշխատանքի արդյունքը կլինի այն, որ աշակերտները գործնականում կ'ծանոթանան տեղի բույսերի, հողի հետ, կհավաքեն բազմաթիվ նմուշներ, կդնեն փորձեր բույսերի ծլումը դիտելու համար և այդպիսով առաջ կգա աշակերտների մեջ հետազոտելու, ուսումնասիրելու մեծ հետաքրքրություն, կ'կապի նրանց շրջապատի հետ, որի արդյունքը պարզ է, պետք է լինի այն՝ որ կստեղծվի պատանի գավառագետ նատուրալիստների ակտիվ։

Բուսաբանության ուղղությամբ կատարված զողջ դիդակտիկ նյութը հավաքելով դպրոցական-գավառագիտական կաբինետում հիմք կըդրվի գավառագիտական բուսաբանական բաժնին, որի շուրջը կհամախմբվեն պատանի նատուրալիստների խմբակները։

Այսպիսի մեթոդով հետազոտական աշխատանքներ են կազմակերպվում նաև գյուղի, շրջ-

ջանի կուլտուր-կենցաղային և տնտեսական կյանքն ուսումնասիրելու ուղղությամբ։

Այդպիսի տեղական նյութի վրա հիմնված, յերեխաները կարող են դպրոցում գիտություն ձեռք բերելու ունակություն ստանալ, նրանք կ'կարողանան տիրապետել գիտություն ձեռք բերելու պրոցեսին-հետախուզող պրոցեսին։ Ահա թե ինչու տեղական նյութը, դիդակտիկայի տեսակետից, անգնահատելի յե։

Տեղական նյութի բաղմակողմանի ուսումնասիրության հետևանքն այն կլինի, վոր աշակերտները վոչ միայն գիտություն ստանալու կարողություն ձեռք կ'բերեն, այլև բավականաչափ գնահատելի տեղեկություններ։ Բացի գիտություն ձեռք բերելու և դիտելու կարողությունից, յերեխաները կստանան նաև հիմնական հասկացողություններ և փաստացի տվյալներ հայրենի գյուղի, շրջանի, ընդհանրապես՝ բնակավայրի մասին։

Բնակավայրն ուսումնասիրելու հսկայական աշխատանքը, չպետք է սահմանափակվի դպրոցական աշխատանքի շրջանակով։ Գյուղական դպրոցը գավառագիտական աշխատանքի կազմակերպողն է, սկսողը։ Այս կազմակերպողի շնորքով մոտեցումից է կախված բնակավայրի բաղմակողմանի ուսումնասիրության գործին գյուղացիության լայն մասսաններին կապելու հնարավորությունը։

Դպրոցի և տեղական գավառագիտական թանգարանների մեջ պետք է լայն ու խոր աշխատակցություն լինի։ Այն նյութերը, վոր հավաքում են դպրոցները և վորոնք գիտական արժեք ունեն, հետագա մշակման նպատակով պետք է հանձնել տեղական գավառագիտական թանգարանին և դպրոցի գավառագիտական կաբինետին, վորն իր հերթին ծառայում է ամբողջ շրջանի դպրոցներին։ Տեղի հասարակական-տնտեսական և բնական-գիտական խնդիրների ուսումնասիրության համար գավառագիտական թանգարաններն ու կաբինետները ստիպված են դիմել մասսայական դիտողություններին։ Այսպիսի դեպքերում շատ հարմար է թանգարանի համար, իսկ կրթական և դաստիարակչական տեսակետից շատ ոգտակար է աշակերտների համար, վոր այս մասսայական աշխատանքը կատարվի աշակերտների ուժերով։

Տեղական դպրոցը վոչ միայն կ'ծավալի գավառագիտական աշխատանքները, հետախուզական աշխատանքին կընտելացնի վոչ միայն իր դպրոցականներին՝ ապագա խորհրդային քաղաքացիներին, այլև տեղի ազգաբնակչությանը։

Խորհրդային դպրոցի ուսուցիչը, ուսումնասիրելով տեղական նյութը, ստիպված կլինի ոգտ-

վել դպրոցական աշխատանքի տարբեր մեթոդներից, նայած տվյալ դպրոցի միջոցներին, ուժերին, նյութին և պայմաններին, նկատի առնելով յերեխաների հասակը և այլն։ Իհարկե, ամենից հաճախ պետք է գործադրել աշխատանքի եֆեկտուրսիոն-հետախուզական մեթոդը։

Անհրաժեշտ է միշտ հիշել, վոր գավառագիտական բնույթ կրող դպրոցական աշխատանքը պետք է համապատասխանի աշակերտների հասակի պահանջներին, պետք է սերտորեն կապված լինի յերեխաների կյանքի հետ և բղխի նրանց շահերից։ Այս աշխատանքը միմիայն այն ժամանակ նշանակություն կունենա, յերբ աշակերտը կ'կարողանա իր ամբողջ ակտիվությունը ցույց տալ այդ գործում։ Թեկուզ այդ մասնակցությունը շատ ել տարրական լինի, այնուամենայնիվ պետք է աշակերտի ուժերի համեմատ լինի։

Ուսուցման և դաստիարակության վողջ պրոցեսում ոգտագործելով տեղական նյութը, վորպես ուսումնասիրության և հետախուզական աշխատանքի արդյունք, վորպես տեղական լավագույն դիդակտիկ նյութ, ուսուցիչը չպետք է մոռանա, վոր դպրոցը հենվելով տեղական նյութի վրա, ամենևին անընդունելի չպետք է համարի

ինչպես նախորդ գլխում արդեն ասել ենք՝ նայելով այլ տեղի, հեռավոր տեղի նյութը։ Ընդհակառակը, չպետք է սահմանափակվել տեղական նյութի նեղ շրջանակում, այլ պետք է հաստատուն կերպով հիմնվելով տեղական նյութի վրա, ուսումնասիրել այն վոչ թե առանձնացած, այլ որդանպես կապելով այն ամբողջ դպրոցական աշխատանքի հետ, կապել այն վողջ յերկրի ուսումնասիրության հետ։

Յերեխաները, անշուշտ, հետաքրքրվում են մոտիկ նյութով, բայց դրա հետ միասին հետաքրքրվում են նաև հեռավոր նյութերով։ Մոտիկը պետք է կամուրջ լինի հեռավորին անցնելու համար, որդանապես կապված պիտի լինի նրա հետ։

Նոր ծրագրերն այդ են պահանջում և այդ մտնում է դպրոցի խնդիրների շարքը։ պետք է մարդուն այնպես դաստիարակել, վոր նա ճանաչի իր բնակավայրը, հասկանա նրա կարիքները, պետք է դաստիարակել հասարակության ապագա այնպիսի գործունյա անդամ, վոր չ'սահմանափակվի ամեն մի փոքրիկ յերևույթի մեջ, այլ ընդհակառակը, այդպիսի ամեն մի յերևույթ ընդունի վորպես մեր հայրենիքի ընդհանուր սոցիալիստական տնտեսության, մի մասը։

Գավառագիտությունը դպրոցում պետք է ծառայի որպես դեպի ավելի լայն հորիզոններ ձգտում կազմակերպելու բազա և պետք է ընդլայնվի մինչև մի ավելի խոշոր մասշտաբ-ամբողջ յերկրի կամ ամբողջ հայրենիքի սահմանները։

Դպրոցական գավառագիտությունը պետք է դաստիարակի մեր բազմահազար դպրոցականների մեջ սեր դեպի մեր սքանչելի հայրենիքը, խորհրդային հայրենասիրության վառ զգացմունքներ, ճանաչելու մեր յերկիրը և նվիրվելու մեր Մեծ յերկրի հզոր վերելքին, աշխատելու և ապրելու հանուն մեր մեծ հայրենիքի, հանուն ԼԵՆԻՆԻ-ՍՏԱԼԻՆԻ վեհ գործի։

ՀՐԱՀԱՆԳ

ԳԱՎԱՌԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԲՈԼՈՐ ՇՐՋԱՆԱՑԻՆ ԺՈՂԿՐԹԱԺՆԻ ՎԱՐԻՉՆԵՐԻՆ

Գավառագիտական ընկերությունների և բյուրոների վերացումից հետո, այդ աշխատանքները բոլորովին մոռացության տրվեցին։ Վորոշ շրջաններում գոյություն ունեցող գավառագիտական նյութերը ցաք ու ցրիվ յեղան։ Նույնիսկ գտնվեցին մարդիկ, վորոնք գավառագիտական ընկերությունների վերացումը բացատրեցին, վորպես առհասարակ գավառագիտական աշխատանքների վերացում։ Այդ պետք է բացատրել միայն և միայն, վորպես թշնամական վերաբերմունքի արտահայտություն դեպի խորհրդային գավառագիտությունը և գավառագիտական ակտիվը։

Նախկին գավառագիտական ընկերությունները դարձել եյին անգործունյա կազմակերպություններ, վորոնք մասսայական վոչ մի աշխա-

տանք չեյին կատարում և աշխատանքի մեջ եյին ներգրավվել նացիոնալիստական-հակահեղափոխական տարրեր, վորոնք գավառագիտական աշխատանքները կորել եյին մեր առորյա քաղաքական խնդիրներից և այն վեր եյին ածել միայն բնական հարստություններ ուսումնասիրող ապաքաղաքական մի կազմակերպության։

Սակայն խորհրդային գավառագիտության խնդիրները շատ ավելի լայն են ու խորը։

Առաջին հերթին խորհրդային գավառագիտությունը հանդիսանում է մեր յերիտասարդության մեջ խորհրդային հայրենասիրության, դեպի մեր Մեծ Հայրենիքն ունեցած սիրո դաստիարակության հզոր լծակներից մեկը։

Այսպիսով, գավառագիտական աշխատանքների բովանդակությունն ու խնդիրներն են՝

1. Զարգացնել լայն ժողովրդական մասսաների մեջ ինքնագործունեություն և դարձնել նրանց սոցիալիստական շինարարության ակտիվ մասնակիցներ։

2. Մեր հայրենիքի հետախուզական ուսումնասիրությունների (տնտեսության, պատմության, կուլտուրայի, կենցաղի, ոգտակար հանածոների ուսումնասիրություններ և այլն) մեջ ներգրավել ժողովրդական ավելի լայն մասսաների։

3. Լայն մասսաներին ծանոթացնել մեր յերկրի, ռայոնի, բնակավայրի հետ։

Գավառագիտական ընկերությունների վերացումից հետո, այժմ ավելի լայնորեն և իր ամբողջ խորությամբ պետք է դնել գավառագիտական աշխատանքների հետագա ծավալման և ավելի ու ավելի զարգացման հարցը։

Մեր յերկրին հարկավոր են հազարավոր խմբակներ՝ Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Հեղափոխության համար մղված պայքարի պատմության, սոցիալիստական շինարարության հարցով զբաղվողների, բնասերների, նատուրալիստների, յերիտասարդ գավառագետների, աշխարհագրության հարցերով հետաքրքրվողների, պատմության, հնագիտության, յերկրաբանության և այլն։

Հարկավոր են զրույցներ այդ բոլոր հարցերի շուրջը։

Անհրաժեշտ են դասախոսություններ առանձին շրջանների ազգագրության, ֆոլկլորի մասին, հարկավոր են աշխարհագրական, բնագիտական, կուլտուր-պատմական եքսկուրսիաներ, տուրիստական արշավներ՝ առանձնապես դեպի քաղաքացիական կռիվների վայրերը, եքսկուրսիաներ դեպի ոգտակար հանածոների վայրերը և այլն։

Գավառագիտական աշխատանքների մեջ

պետք է ներգրավվեն նախաձեռնող, գործունյա, խանդավառությամբ այդ աշխատանքներին կրպչող մարդիկ և լավ կազմակերպիչներ։

Այդ աշխատանքների կազմակերպման ու ղեկավարման ամբողջ պատասխանատվությունը շրջանում ընկնում է շրջժողկրթբաժինների վրա, վորոնք այդ գործի մեջ պետք է լայնորեն ներգրավեն դպրոցները՝ աշակերտությանը, ուսանողներին, ուսուցիչներին, պրոֆմիությունները, ակումբները, պիոներ կազմակերպությունները և հատկապես կոմյերիտական կազմակերպությունները։

Անհրաժեշտ է պատշաճ բարձրության վրա դնել խորհրդային գավառագիտության աշխատանքները շրջանում, հավաքել գավառագիտության վերաբերյալ բոլոր նյութերը, կենտրոնացնել այն շրջկենտրոնի վորևե դպրոցում և վերածել այն գավառագիտական թանգարանի։

Թանգարանի աշխատանքների մեջ ներգրավել մեր Մեծ Հայրենիքն ուսումնասիրողների՝ բոցավառ հայրենասերների ակտիվը։

Առաջարկվում է բոլոր ժողկրթբաժիններին ղեկավարվել սույն հրահանգով և բոլոր կազմակերպչական հարցերով դիմել Լուսժողկոմատի ԲՈՒՀ-երի վարչության կից գործող գավառագիտական աշխատանքները ղեկավարող կազմ-կոմիտեին։

Կազմկոմիտեին պարտավորեցնել ուժեղացնելու կենդանի կապը շրջանների հետ և գործնական ոգնություն ցույց տալ շրջաններին՝ գավառագիտական աշխատանքների վերակառուցման գործում։

Հայկական ԽՍՀ Լուսժողկոմ՝
Բ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԲՈՒՀ-երի Վարչության պետ՝
Գ. ՇԱՐՈՅԱՆ

1938 թ. 12 դեկտեմբերի.

Ի՞ՆՉ ԿԱՐԴԱԼ

ՀԱՅԵՐԵՆ ԼԵԶՎՈՎ ԼՈՒՅՍ ՏԵՍԱԾ ԳԱՎԱՌԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿԸ

1. Ա. Ի. ՉԵՆՍ-ԼԻՏՈՎՍԿԻ յեվ Ի. Ս. ԱԲՐԱՄՈՎ.— Բնակավայրի ուսումնասիրությունը. հրատ. 1928 թ., եջ 236, գինը 1—50 կ.
2. Վ. ԴԱՐՑԱՆ.— Խարհրդային գավառագիտության խնդիրները. հրատ. 1939 թ. եջ. 64, գինը 1 ռուբլի։
3. Ռ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ.— Պատանի բնասերների խմբակ. հրատ. 1930 թ. եջ 83, գինը 40 կոպեկ։
4. Մ. ՉԱՌԱՖՅԱՆ.— Ի՞նչպես յեվ վո՞rտեղ կատարել յերկրաբանական դիտողություններ. եջ 69, գինը 50 կոպ.
5. ԱԼ. ԱՐԱՐԱՏՅԱՆ.—Ֆենոլոգիական դիտողություններ. եջ 67, գինը 50 կոպ.
6. Բյուլլետեն № 3—4, Հայկական ԽՍՀ Լուսժողկոմատի 1938 թ. Հրահանգ գավառագիտական աշխատանքները կազմակերպելու մասին։
7. ԳԱՌՆԻ-ԳԵՂԱՐԴ.—ՊՀՊ Կոմիտեյի հրատարակություն. եջ 46, գինը 4 ռուբլի։
8. ԴԻԼԻՋԱՆԻ ՇՐՋԱՆ.—ՊՀՊ Կոմիտեյի հրատարակություն. եջ 38, գինը 4 ռուբլի։

9. ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՇՐՋԱՆ.—ՊՀՊ Կոմիտեյի հրատարակություն. եջ 28, գինը 4 ռուբլի։
10. Ս. ԼԻՍԻՑՅԱՆ յեվ ՑԵ. ԲԱՑԲՈՒՐԴՅԱՆ.— Հնությունների ցուցակագրությունն ու նկարագրությունը. եջ 72, գինը 40 կոպ.
11. Վ. ԴԱՐՑԱՆ.— Խարհրդային գավառագիտությունը յեվ դպրոցը-եջ 40, գինը 20 կոպ.
12. Վ. ԴԱՐՑԱՆ.—Դեպի Ելբրուս-եջ 74 գինը 2 ռուբլի։
13. Վ. ԴԱՐՑԱՆ, Դ. ՍԱՐՑԱՆ, ԲՈՒԴԱՂՅԱՆ.—Արագածի առոդաձեվ արշավը—1934 թ. եջ 96, գինը 1 ռ.
14. ՀՈՎՀ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ.—Արագած լեռը—եջ 50, գինը 40 կոպ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Խորհրդային գավառագիտությունը . . . 3 եջ
2. Գավառագիտությունը և դպրոցը . . . . 16 »
3. Հրահանգ գավառագիտական աշխատանքները կազմակերպելու մասին . . . . . 33 »
4. Ի՞նչ կարդալ . . . . . 38 »

ՎՐԻՊԱԿ

Եջ 32 ներքևում բաց է թողնված.

*) Ծանոթություն. Դպրոցական գավառագիտության վերաբերյալ վորոշ գրույթները քաղվածորեն կազմված են ըստ Զենոնի-Լիտովսկու և Աբրամովի «Բնակավայրի ուսումնասիրությունը» և Վ. Դարյանի «Խորհրդային Գավառագիտության խնդիրները» գրքերից։

Գլավլիտի լիազոր Վ.—2180, Պատվ. № 21, Տիրաժ 1500

«ԱՐՄԹԱՆ»-ի տպարան, Յերևան, Լենինի 67.

Հայաստանի Ազգային գրադարան
NL0427862

20129

ԳԻՆԸ 30 ԿՈՊ.

В. ДАРЬЯН

СОВЕТСКОЕ КРАЕВЕДЕНИЕ
и
ШКОЛА

ПРОСИЗДАТ
Ереван, 1939 г.

91
Դ-27